

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2026/11**

«30» 04 2026 թ.

**ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ.Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիգա-Տեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Աբրահամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:<sup>1</sup>

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 36,000,000 (երեսունվեց միլիոն ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:<sup>2</sup>

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և և պայմանները տարածվում են 05.01.2026թ. կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրագրապահ ժամկետում: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3

ՀՀ ՖԷՆ գործառնական վարչություն

900011018703

02565518

Գլխավոր քարտուղար՝  
Դ. Գաապարյան



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Լիգա-Տեք» ՍՊԸ  
Ք. Երևան, Պարոնյան 28/2

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570005045530100

Հ/Հ ՀՀ 01553931

Տնօրեն

Ա. Արթուրյան



(ստորագրություն)

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**	
1	72261160/3	«ԱԲ վիրտուալ ինստիտուտի առցանց հայտերի ներկայացման վեբ հարթակի» ծրագրային ապահովում և սպասարկում, «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հաշվարկման ավտոմատ համակարգի» ծրագրային ապահովման մատուցում ***Տեխնիկական բնութագիրը կցվում է	դրամ	36,000,000	1	ք.Երևան,	30.12.2026թ	

**\*\*\*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

«ԱԲ վիրտուալ ինստիտուտի առցանց հայտերի ներկայացման վեբ հարթակի» ծրագրային ապահովման

**Նպատակ**

Տեղեկատվական հարթակը ստեղծվում է բարձր տեխնոլոգիական ռեսուրսների ստացման համար հայտերի ներկայացման գործընթացի կազմակերպման և ավտոմատացման նպատակով:

Հարթակը նախատեսված է ապահովելու առցանց հայտերի ներկայացումը, դրանց մշակումն ու մոնիթորինգը, ինչպես նաև բովանդակության և գործընթացների կառավարումը վարչարարական գործիքների միջոցով:

**Հիմնական ֆունկցիոնալ**

Օգտատիրոջ միջերես (Front-end)

- Առցանց հայտի ներկայացում վեբ միջերեսի միջոցով:
- Հայտի դինամիկ ձև՝ կառուցվածքի և դաշտերի փոփոխման հնարավորությամբ:
- Հայտի ներկայացում՝ դիմորդի անունից և լիազորագրի հիման վրա:
- Օգտատերերի գրանցում և նույնականացում՝ ազգային նույնականացման համակարգի միջոցով:
- Հայտի կարգավիճակի դիտարկում:

Վարչարարական վահանակ (Back-end)

- Վեբ կայքի բովանդակության կառավարում:
- Հայտերի դիտարկում, ֆիլտրում և մշակում:
- Գործունեության և հայտերի մոնիթորինգ:

Հայտերի ձևի կառավարում

- Հայտի ձևի կառուցվածքի կառավարում (դաշտերի ավելացում, փոփոխում, հեռացում, բովանդակության փոփոխություն):
- Օգտատերերի և մուտքի իրավունքների կառավարում:
- Հայտի ձևում փոփոխությունների օպերատիվ իրականացում՝ պատվիրատուի պահանջով:
- Նոր դաշտերի, վավերացման կանոնների և բիզնես-լոգիկայի ավելացում:
- Համապատասխան փոփոխությունների իրականացում վարչարարական վահանակում:

#### Ինտեգրացիաներ

- Ինտեգրում ազգային նույնականացման համակարգի հետ:
- Ինտեգրում այլ գերատեսչությունների տեղեկատվական համակարգերի հետ API-ների միջոցով՝ արտաքին աղբյուրներից տվյալների ավտոմատ ստացում և մշակում:

#### Շահագործում և տեխնիկական սպասարկում

- Հարթակի անխափան աշխատանքի ապահովում:
- Համակարգի կայուն աշխատանքի ապահովում՝ միաժամանակյա օգտատերերի դեպքում:
- Համակարգի մոնիթորինգի իրականացում:
- Տեխնիկական խնդիրների օպերատիվ վերացում (ոչ ավելի, քան 24 ժամ՝ խնդրի հայտնաբերման կամ ծանուցման պահից):

#### Փոփոխությունների կառավարում

- Ֆունկցիոնալ փոփոխությունների համաձայնեցում պատվիրատուի հետ:
- Աշխատանքների ծավալի և ժամկետների գնահատման ներկայացում:
- Փոփոխությունների իրականացում միայն պատվիրատուի հաստատումից հետո:

#### Պատվիրատուի աջակցություն

- Տեխնիկական աջակցություն պատվիրատուին:
- Օգտագործման հետ կապված խորհրդատվություն:
- Խնդիրների արձագանքում և լուծում:

#### Բիզնես գործընթացների նկարագրություն

- Օգտատերը մուտք է գործում համակարգ ազգային նույնականացման համակարգի միջոցով:
- Հայտը լրացվում և ներկայացվում է առցանց միջավայրում:
- Հայտի ներկայացումից հետո այն հասանելի է դառնում վարչարարական վահանակում մշակման համար:
- Վարչարարական օգտատերերը կատարում են հայտերի դիտարկում, մշակում և մոնիթորինգ:
- Հայտերի կարգավիճակները հասանելի են օգտատիրոջը համակարգում:

#### Անվտանգություն

- Անձնական տվյալների պաշտպանություն ըստ ՀՀ օրենսդրության:
- Անվտանգ նույնականացում և լիազորում:
- Օգտատերերի գործողությունների գրանցում (logging):
- Չթույլատրված մուտքի կանխարգելում:
- Տվյալների պաշտպանություն
- Բոլոր տվյալների փոխանակումը իրականացվում է անվտանգ API-ների միջոցով:
- Համակարգում ապահովվում է գործողությունների լոգավորում և վերահսկում:

«ԱԲ վիրտուալ ինստիտուտի առցանց հայտերի ներկայացման վեբ հարթակի» ծրագրային ապահովման մեկ տարվա տեխնիկական սպասարկման

## Նպատակ

Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է «ԱԲ վիրտուալ ինստիտուտի առցանց հայտերի ներկայացման վեբ հարթակի» ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկման, աջակցման և շահագործման ապահովման պահանջները:

Սպասարկման նպատակն է ապահովել հարթակի անխափան և անվտանգ աշխատանքը, տվյալների ամբողջականությունը, ինտեգրացիաների կայունությունը, ինչպես նաև օգտագործողների արդյունավետ աջակցությունը:

## Հիմնական ֆունկցիոնալ

### Համակարգի տեխնիկական սպասարկում

- Հարթակի աշխատանքի մշտական մոնիտորինգ:
- Սերվերների և ենթակառուցվածքի վերահսկում:
- Տվյալների բազայի աշխատանքի օպտիմիզացիա:
- Լոգերի վերլուծություն և հնարավոր խնդիրների կանխարգելում:

### Սխալների կառավարում

- Տեխնիկական խնդիրների հայտնաբերում և գրանցում:
- Խնդիրների դասակարգում ըստ առաջնահերթության:
- Խնդիրների օպերատիվ վերացում և կրկնակի թեստավորում:
- Կրիտիկական խնդիրների արագ արձագանքում:
- Տեխնիկական խնդիրների վերացման առավելագույն ժամկետ՝ մինչև 24 ժամ՝ խնդրի հայտնաբերման կամ ծանուցման պահից:

### Պատվիրատուի աջակցություն

Պատվիրատուի հարցումների ընդունում և մշակում:

Տեխնիկական խորհրդատվություն հարթակի օգտագործման վերաբերյալ:

Պատվիրատուի խնդիրների արձագանքում և լուծում:

### Ինտեգրացիաների սպասարկում

- Ազգային նույնականացման համակարգի հետ ինտեգրացիայի աշխատանքի վերահսկում:
- Արտաքին տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրացիաների աջակցություն:
- Տվյալների փոխգործելիության մշտական վերահսկում և սխալների վերացում:

### Թարմացումներ և բարելավումներ

- Ծրագրային ապահովման պարբերական թարմացումներ:
- Անվտանգության թարմացումների իրականացում:
- Փոքր ֆունկցիոնալ բարելավումների իրականացում պատվիրատուի պահանջով:
- API փոփոխությունների ադապտացիա:

### Մշտադիտարկում և վերահսկում

- Հարթակի աշխատանքի մշտադիտարկում:
- Կատարողականության և ծանրաբեռնվածության վերահսկում:
- Սխալների ավտոմատ հայտնաբերում և արձագանքում:

### Հաշվետվություններ

Սույն փաստաթուղթը սպասարկման հաշվետվությունների կազմում:

- Հարթակի աշխատանքի վերաբերյալ վերլուծական տվյալների տրամադրում:

### **Մուտքի կառավարում և անվտանգություն**

- Օգտագործողների մուտքի իրավասությունների կառավարում:
- Դերերի և իրավունքների սահմանում և վերահսկում:
- Գործողությունների լոգավորում և աուդիտ:
- Տվյալների պաշտպանության ապահովում:

### **Սպասարկման մակարդակի ցուցանիշներ**

- Կրիտիկական խնդիրների արձագանքման ժամանակ՝ մինչև 120 րոպե:
- Կրիտիկական խնդիրների լուծման ժամանակ՝ մինչև 24 ժամ:
- Միջին մակարդակի խնդիրների լուծման ժամանակ՝ մինչև 3 աշխատանքային օր:
- Օգտագործողների հարցումների արձագանքման ժամանակ՝ մինչև 8 աշխատանքային ժամ:
- Պահուստային պատճենների ստեղծում՝ ամենօրյա:
- Տվյալների վերականգնման առավելագույն ժամանակ՝ մինչև 24 ժամ:

### **Բիզնես գործընթացների նկարագրություն**

- Հարթակի շահագործման ընթացքում իրականացվում է շարունակական տեխնիկական մշտադիտարկում:
- Խնդիրների առաջացման դեպքում դրանք գրանցվում են և դասակարգվում ըստ առաջնահերթության:
- Խնդիրների լուծումից հետո իրականացվում է համակարգի կրկնակի թեստավորում:
- Օգտագործողների դիմումների հիման վրա իրականացվում է տեխնիկական աջակցություն:

### **Անվտանգություն և հուսալիություն**

- Տվյալների պաշտպանություն ըստ ՀՀ օրենսդրության և կիրառվող անվտանգության ստանդարտների:
- Բոլոր տվյալների փոխանցումը իրականացվում է անվտանգ API-ների միջոցով:
- Համակարգում ապահովվում է գործողությունների ամբողջական լոգավորում և վերահսկում:

## **ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հաշվարկման ավտոմատ համակարգի» ծրագրային ապահովման

### **Նպատակ**

Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հաշվարկման ավտոմատ համակարգի» ծրագրային ապահովման սպասարկման, տեխնիկական աջակցման և շահագործման ապահովման պահանջները:

Սպասարկման նպատակն է ապահովել համակարգի անխափան և անվտանգ աշխատանքը, տվյալների ամբողջականությունը, ինտեգրացիաների կայունությունը, ինչպես նաև օգտագործողների արդյունավետ աջակցությունը:

### **Հիմնական ֆունկցիոնալ**

#### **Համակարգի տեխնիկական սպասարկում**

- Հավելվածի անխափան աշխատանքի մշտադիտարկում:
- Տվյալների շտեմարանի աշխատանքի օպտիմիզացիա:
- Լոգերի վերլուծություն և հնարավոր սխալների կանխարգելում:

#### **Սխալների կառավարում**

- Սխալների հայտնաբերում և գրանցում:

- Կրիտիկական խնդիրների օպերատիվ արձագանքում և լուծում:

### **Օգտագործողների աջակցություն**

- Օգտագործողների հարցումների ընդունում և մշակում:
- Խորհրդատվություն համակարգի օգտագործման վերաբերյալ:
- Օգտագործողների խնդիրների արագ արձագանքում և լուծում:

### **Թարմացումներ և բարելավումներ**

- Ծրագրային ապահովման պարբերական թարմացումներ:
- Անվտանգության թարմացումների իրականացում:
- Փոքր ֆունկցիոնալ բարելավումների իրականացում:
- API փոփոխությունների ադապտացիա:

### **Մշտադիտարկում և վերահսկում**

- Համակարգի աշխատանքի 24/7 մշտադիտարկում:
- Կատարողականության և ծանրաբեռնվածության վերահսկում:
- Սխալների ավտոմատ հայտնաբերում և արձագանքում:

### **Հաշվետվություններ**

- Սպասարկման վերաբերյալ պարբերական հաշվետվությունների պատրաստում:
- Սխալների և միջադեպերի հաշվետվությունների կազմում:

### **Մուտքի կառավարում և անվտանգություն**

- Օգտագործողների մուտքի իրավասությունների կառավարում:
- Դերերի և իրավունքների սահմանում:
- Գործողությունների լոգավորում և աուդիտ:
- Տվյալների պաշտպանության միջոցառումների իրականացում:

### **Սպասարկման մակարդակի ցուցանիշներ**

- Կրիտիկական խնդիրների արձագանքման ժամանակ՝ մինչև 120 րոպե:
- Կրիտիկական խնդիրների լուծման ժամանակ՝ մինչև 24 ժամ:
- Միջին մակարդակի խնդիրների լուծման ժամանակ՝ մինչև 3 աշխատանքային օր:
- Օգտագործողների հարցումների արձագանքման ժամանակ՝ մինչև 24 ժամ:
- Պահուստային պատճենների ստեղծում՝ ամենօրյա:
- Տվյալների վերականգնման ժամանակ՝ մինչև 8 աշխատանքային ժամ:

### **Բիզնես գործընթացների նկարագրություն**

- Համակարգի աշխատանքի ընթացքում իրականացվում է շարունակական մշտադիտարկում և սպասարկում:
- Սխալների հայտնաբերման դեպքում կատարվում է դրանց գրանցում և դասակարգում:
- Խնդիրների լուծումից հետո իրականացվում է կրկնակի թեստավորում և համակարգի բնականոն աշխատանքի վերականգնում:
- Օգտագործողների դիմումների հիման վրա իրականացվում է տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն:

### **Ֆոխգործելիություն**

Համակարգի սպասարկման շրջանակում ապահովվում է հետևյալ փոխգործելիությունների անխափան աշխատանքը.

- Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական համակարգ:
- «ԵսԵմ» ազգային նույնականացման պորտալ:
- Բնակչության պետական ռեգիստր:

- Տվյալների պաշտպանություն ըստ ՀՀ օրենսդրության և միջազգային անվտանգության ստանդարտների:
- Բոլոր տվյալների փոխանցումը իրականացվում է անվտանգ API-ների միջոցով:
- Համակարգում ապահովվում է գործողությունների ամբողջական լրգավորում և վերահսկում:

**Համապատասխանություն**

Սպասարկման գործընթացը պետք է համապատասխանի՝

- «ՀՀ Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին:
- ՀՀ կառավարության համապատասխան որոշումներին:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարգավորումներին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  
 Բ. Երևան, Վ. Սարգսյան 3/3  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011018703  
 ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝  
**Դ.Գասպարյան**



**ԿԱՏԱՐՈՂ**

«Լիգա-Տեք» ՍՊԸ  
 Բ. Երևան, Պարոնյան 28/2  
 Ամերիաբանկ ՓԲԸ  
 Հ/Հ 1570005045530100  
 ՀՎՀՀ 01553931

Տնօրեն՝  
**Ա.Աբրահամյան**



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/3	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	:	:	:	:	15,000,000	18,000,000	21,000,000	24,000,000	27,000,000	30,000,000	33,000,000	36,000,000	36,000,000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  
 Բ. Երևան, Վ. Սարգսյան 3/3  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Կ 900011018703  
 ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝  
 Դ. Գասպարյան

/ստորագրություն/



**ԿԱՏԱՐՈՂ**

«Լիգա-Տեք» ՍՊԸ  
 Բ. Երևան, Պարոնյան 28/2  
 Ամերիաբանկ ՓԲԸ  
 Հ/Կ 1570005045530100  
 ՀՎՀՀ 01553931

Տնօրեն՝  
 Ա. Աբրահամյան

/ստորագրություն/  
 Կ.Տ



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			բանական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

